



## 28. ԱՐԾ, ՄԱՐԹ ԵՎ ԱՂՎԻՍ

Մարթըմ կերթա գաճե:

Ուսին վիրուց կը փըրթընը վար մարթուն, ըզմարթ կանը,  
կը պիրը հետ հինը: Մարթ կերթա, կը տեսնա՝ արճ գի պիւն վե:

Արճն էլ թաթով կանը, կըսը. — Արը՛, մը՛ վախանա:

Քանը ուր ճամբախ չըկա, մարթ կը նահլանջանա, կիւնը,  
կերթա:

Արճ ուր փափ կը լիզը, կը լիզը, քավ կը տա վերա, կը տա  
հիռճիվ մարթուն, կըսը. — Ա՛ռ, կի՛:

Մարթն էլ կուտը, քանցըր կիւնը, մեղրը նման քանցըր: Քան-  
տուն էօր ըզմարթ կը շախը: Ինչ քանտուն էօր կը թումումը, արճու  
վախտ կը գա, ուր չըլից տ՛իւնը տաւս:

Կիւնը, կավիւն կը ծակը, կիւնը տաւս, հերկեմ ստըմ կը պի-  
րը, կը կախը տակ:

Կը մըմըմա, կըսը. — Մա՛րթ, ձեռ թա՛լ, իս ըզքի քաշիմ  
տաւս:

Ձեռ կը թալը, ըզմարթ կը քեշը, կը խանը տաւս:

Մարթուն գյեղ շանք կը տա թաթով, կըսը. — Դե՛, գյընա՛,  
Աստված խա՛ քյի: Իս իմ աղեկութիւն արը:

Մարթ էլավ, գյընաց գյեղ, գյընաց մատ Ամբըրեմ, էսաց. —  
Կալավ, ճիճ արճըմ տիսիր իմ, յա՛նք, սպանի՛նք:

Ամբըրեմ առից ըզխլամքըտիր, իրը վար հերը պերմիւն:

Արճն էլ պիւնեմ իրը տաւս, իրիշից, զուր շախած մարթ  
ճանչըցավ: Իթող հիտիվ մարթուն: Ամբըրեմ ուր խլամքըտիրով  
տանցան, չըկանցան ինյըն հիտիվ արճուն:

Մարթն էսաց. — Ա՛րճ ախպեր, մ՛իմի՛ հիտիվ ձիկ:

Արճ էսաց. — Իս, տաւ ան էօրն ենքյ ախպեր, ինչ իս քյի կը շախեր:

Մարթ էսաց. — Ա՛րճ ախպեր, իս քյի ջարթիցի մըհա, տաւ ի՞նչ կտրիճ մարթ էր:

Արճ էսաց. — Հիսան խում կաթը կերող ը, բերախտ ը, բընե-  
նավե ըզքյի տ՛ուտիմ:

Մարթ փախավ: Աղվիս մարթաւն ռաստ իրը:

էսաց մարթ. — Աղվի՛ս, զիմ քաւր տամ քյի, ըզծը ազատը նա  
արճաւ մոտեն:

Աղվիս էսաց. — Ա՛րճ ախպեր, ան վըրե՞ թըղիր իս հիտիվ  
մարթաւն:

էսաց. — Իս քանսուն էօր աղեկութիւն արը խա մարթաւն,  
վերճ ան բերախտութիւն արավ խա ծը:

Աղվիս էսաց. — Նուր գընաց ուր տուն, անունց անաթ էն ը՛  
անունք անաղ կը խըմին, օր տա անաղ խըմավ, խիլքյ գըլխեն  
գընաց, ալ խաբար չէլավ, էլավ, զԱմբըրը խուամքըտիր առից,  
էկավ վար քյի, չըգըտցավ: Մըկա նուր փոշմընիր ը: Ուր տա տաւ  
ս՛ավատա, մեկ կանգախ թըխ պիրը, տաւ խմը:

էսաց. — Դե՛, հարողկը պի՛, մըհա ի՞նչ խամ ը:

Աղվիս մարթաւն էսաց. — Աստօն՛ սիրուն, խասը՛, վատ  
անաղ պի՛:

Իպը, իտու գարճ:

Աղվիս էսաց. — Ա՛րճ ախպեր, կը խըմիս, հաւա քաւ հիտ-  
հանաճ գըլտցը:

Արճ խըմավ, խըմիլաւ պես ծըռավ, քար, թուփ իտու մաչ ուր  
գըլխուն:

էսաց. — Աղվի՛ս, Աստօն՛ սիրուն, ըզծը նա բալից ազատը՛:

Աղվիս էսաց. — Ա՛րճ ախպեր, քաւ վուտքյիր ցըցը, քաւ գըլխիս  
խուրը մաչ ծան:

էլավ, աղվըսկու խաբար արավ, գըլխիս խութից մաչ ծան,  
վուտքյիր ցըցից:

Արանղ մատեն իթուղ, իրի, զինքյ էթաւ վար աղվըսկու  
վուտաց:

էսաց. — Ձի թարա, տաւ իմ ճիճ ախպեր, իս քաւ պըստիկ  
ախպեր:

էսաց. — Դաւ անղ արա, նա մարթաւն թոչար պան չըսիս:

Մարթ էլավ, գյընաց ուր տուն, աղվիս էլավ, գյընաց հիտիվ  
մարթուն, մարթ էսաց. – Աղվիս, ի՞նչ կուզիս:

էսաց. – Կուզիմ քիւ քիւր:

Մարթ կը փոշմընը:

Կըսի. – Իս իմ քիւր չը՞մ ի՛տա քի:

Աղվիսն էլ կըսը. – Մարթ, իս աղվիս իլնիմ, դու ըզծը խա-  
պիս:

Կը գա՛ հիտիվ արծիւն. – Աստօու սիրուն իլնը, ան մարթ  
բերախտ ը, արը՛, սպանը՛:

Արծ աղվըսկուն կըսը. – Դեռիվ քի իս թարա՛ իմ արի, ան ան  
մարթուն պան չը՞մ ըսի:

Աղվիս կըսը. – Ուր անցկուն ը, տու գյընա խա՛ քիւ կուռօին,  
իս գյըտիմ ան մարթ:

Աղվիս կերթա սար վե, կան կը գա՛ ուր խանանը: Կը տեսնա՛  
մեկ մարթը՞՛ խընծարը՞մ գի ձեռ, կը գա՛:

Աղվիս անու կըսը. – Ատ ի՞նչ խընծար ը քիւ ձեռ, մարթ:

Կըսը. – Նա խընծար ինչ կնիկ ուտը, կիլնը տըղով:

Աղվիսն էլ կըսը. – Ատ խընծար տո՛ւ ձիկ:

Կըսը. – Ան խընծար տամ քիկ, տու ի՞նչ տը տաս ձիկ:

Կըսը. – Քի ի՞նչ կը պը:

Մարթ էսաց. – Իս մաղ շենող իմ: Ձի ոխչըրը փոսթ կը պը,  
ուր շինիմ մաղ:

Կըսը. – Քի տուն գի դիւրն ը:

Մարթ շանքյ կը տա: Կը բարըշը քանսուն մուրթ: Որտեղ  
մուրթը՞մ թանցին, աղվիս փախցից, առից, տարավ: Չուր քանսուն  
մուրթ իպի, իտու հինը:

էլավ, ըզխընծար ձեռնե՛ն առից, իրը: Իրը մա՛ մարթ:

էսաց. – Քիւ քիւր տու ս՛իտա՞ ձը:

Մարթ աղվըսկուն էսաց. – Իս պատիճը՞մ ինկա՛ քիւ ձեռ:

Աղվիսն էլ էսաց. – Կուր տու ս՛իտա, ա՛ռ նա մեկ խընծար,  
իմ նշան ը, թախ մընա խա՛ քիւ քիւրուչ:

Քիւր ինչ ըզխընծար տեսավ, թուշ եզար հինը, կերավ:  
Կիրիլու պես էլավ տըղով: Եօր վար ավուր փուր ճիճացավ:

Մարթ քիւրուչ էսաց. – Ատ ի՞նչ էլավ խա՛ քի: Անցկընե՛մ  
տարը կա, իս խատ աղվըսկուն կըռիվ իմ, քի չը՞մ իտա աղվըս-  
կուն, դիւր տու էլար, իմ ըրկան գանցիր մատ աղվիս:

Ախշիկ էսաց. — Իս խնարար չունիմ աղվըսուց:

Մարթ էսաց. — Իմ նամուս թափավ, իս տ'հրահղկիմ, աղվիս պիրիմ, տամ անու:

Հարահղկից հիտիվ աղվըսկեն:

էսաց. — Աղվիս, Աստծու սիրուն, իմ քուր տըվիր իմ քյի, առ տար:

Աղվիս էսաց. — Ապա ծի էլ պեթկ չը, իս տըղով կնիկ տ'առնիմ, ի՞նչ անիմ:

Մարթն էսաց. — Աստծու սիրուն իլնը, ինչ կանիս, դախ քու Աստծուն կանիս, քու կնիկն ը, ա՛ռ, տա՛ր:

Աղվիսն էլ կըսը. — Ախր Աստվածն ը պիրիր վար ծի, իս տը տանիմ, տու քու կաթ, իս՝ իմ կաթ: Օր տա տու հանաճ էօր տեր ծի, քանձ հըմեն աղեկ չը՞ր իլնը: Նամուս թափավ, նուր տըվիր:

Աղվիս ըզքուր կառնի, կը տանը ուր խնամար:

Աստծու խըրանանքյով քուրուչ փուր կիճնը:

Ութ էօր վերա կընցնը, մարթ կըսը. — Տ'երթամ մատ իմ քուր, տեսնամ ի՞նչ հալը վերա յը:

Կերթա, կը տեսնա քուրուչ փուր իճիր ը:

- Վո՛ւյ,- կըսը,- քուրի՛կ, էն աղեկ տու քու բալից պըռճար: Աստծու սիրուն, գանդտիկ թո՛ւղ, արը՛ տուն:

Քուր կըսը. — Դատար կաց ձենե, իմ իրիկ տալ ծիկ շատ ը:

Կիլնը, ըզքուր կը խապը, կառնը, կը պիրը տուն: Հեվարիմ աղվիս կը գա տուն: Կը տեսնա՝ կնիկ տուն չը:

Ան էլ կերթա վար մարթու տըռան, կըսը. — Մա՛րթ, քու քուր տո՛ւ, իս տանիմ, վըրե՞ խնայիցիր, պիրիր:

Մարթ կըսը. — Անկարելի յը, իս չը՛մ իտա:

Աղվիսն էլ կըսը. — Իս աղվիս իլնիմ, տու ըզձը խապի՛ս:

Մարթ կըսը. — Խարիր տարը յէլ մնա, իս չը՛մ իտա, անկարելի կուռձ ը:

Աղվիս կիլնը, կերթա մա Ամբըրեն: Ամբըրեն կ'հրահղկը, մարթ կը տանը էնտեղ:

Կըսը. — Ամբըրա՛, իս անու խուզյին անգատիցը արծու ձեռնեն, ան ուր քուր իտու գի: Ինչ արձ գըռնաց, փոշմընավ, ալ քուր չըր իտա: Անու քուր էլավ տըղով: Էլավ գ'հրավանվ էթալ վար գիկ: Էլա՛, ըսըցի խիղճ ը, առի ըզքուր, պիրը: Դանա քանը յեր քուրուչ

փուր, իճնավ: Մարթ գանդտիկ զուր քուր առից, տարավ: Մըկա կը  
լնամ, կը բռռամ, չի տա: Իմ նամուսն էլ թափավ:

Ամբըրեն աղվըսկունն էսաց. — Ի՞նչ տաս ծի քաննափուլ, իս  
ըզքու կնիկ առնիմ, տամ քյի:

էսաց. — Ձենն ի՞նչ կը գան, իս շեվար իմ: Եթե ուր տու Ամ-  
բըրա իս, Աստծու տաննաստանով միր տանտ կըտորը:

Ամբըրեն էսաց. — Ի՞նչըխ տու աղվիս մ'իս, ըզքուր կամնիս  
քաննափուլ, նուր ըզմարթ կազատիս, իս Ամբըրեն մ'իմ, քյենն քան-  
նափուլ չամնիմ:

Ան էլ էսաց. — Ախըր իկիր վերես, քու ուզած ի՞նչ ը, ուզի՛,  
ուր իս պիրիմ:

էսաց. — Ձի փուկ չըկա իմ խարորին, գըընան՝ զի փուկըմ պի:

Աղվիսն էլ կը գան, իրիթյ եոր կը տանփկանա մանչ առտին: Ան  
մեկ եոր առտը տեր ըզփուկ կը մահնա հանդե, կերթա:

Աղվիս ըզփուկ կը փանխցը, կը պիրը: Կը պիրը, տա  
զԱմբըրեն:

Ամբըրեն էլ կը հարհըկը հիտիվ մարթուն:

Կըսը. — Քու քուր անու կնիկն ը, պի՛, տու՛ անու, խիղճ ը:

Կիլնը, ըզկնիկ կը տա զաղվիս: Ասպանուքին կընկան մա-  
տեն էրկու տըղա կը տա աղվըսկուն: Տըղենիր կինին հիտիվ  
աղվըսկուն, կիլնին տուս:

Արճ ան կընարեն կը գան հիտիվ աղվըսկուն:

Կըսը. — Աղվի՛ս, Աստված խեր անի, քյի տըղա չըկեր, նա  
հուրդդ՞ւց ի քու տըղենիր:

Աղվիս կըսը. — Կնիկ իմ պիրիր, ուր թու տեղ անտանրզ կնիկ  
չըկա:

Կըսի. — Քու կընկան անըլ հուրդդ՞ւց ը:

Կըսի. — Իմ կնիկ նա մարթու քուրն ը:

Արճ կըսը. — Իս ըզմարթ շախիմ, քուր խասնը քյի՞:

Կերթա, վանր մարթու տըռան կը կայնը, կըսը. — Մա՛րթ, իս  
ըզքյի շախիցը, տու ըզքուր տըվիցիր աղվըսկուն:

Մարթն էլ կըսը. — Իս ի՞նչըխ անիմ, աղվըսկու տապիր  
շատ ը:

Կը հարհըկը, զաղվիս կը պիրը արճ, կըսը. — Աղվի՛ս, ռաս-  
տինն ըսա, քու աղեկուքին ի՞նչ էլնավ խան նա մարթուն, ուր քուր  
խուու քյի:

Կըսը. — Վոլն՛, ան էօր, ինչ տհւ գան պըռնիցիր, տ՛ուտեր, իս գան ազատիցը, էսաց, թե՛ զիմ քուր տը տամ քի:

Արճն էլ կըսը. — Աստված զիմ տուն ավրը, իս ճիճացիր իմ, հաննա խիլը չըկա իմ գըլիխ: Քանտուն էօր իս գմարթ շնխիցը, վանստակ խասավ աղվըսկուն:

Աղվիսն էլ կըսը. — Ա՛րճ ախպեր, քու պես իլնը, իս չըմ շախվը: Ասպանձութին խիլը տըվիր ձիկ, կըտըրճութին տըվիր քիկ:

Արճն էլ կերթա, վնար աղվըսկե պիւնին կը նստը, կըսը. — Ահդ իլնը, չուր իս քու կնիկ չըտանիմ, իս էստեղեն չըկայնիմ:

ԸգըլըՖըթով մընացած նիրս ծարավ, աղվիս, ուր կնիկ, ուր ճըժիր, արճիւ հանտուն չըն գըլիսշնա իլնը տիւս: Աղվիս գանդտիկ գընտին կը ծակը, հիւրհիւշ տեղ վե կիլնը տիւս: Կը գն մն մարթ, մն անիր:

Կըսը. — Անի՛ր, պի ցանխավիլըմ խանլացըցինքը, տանք արճուն, անգատվինքը մընեն:

Մարթն էլ կիլնը, ըգցանխավիլ կը խանլացըցը, կը կայնըցը պատի հիրիս վե:

Աղվիս կը գն մնտ արճ, կըսը. — Ձենե ի՞նչ կուզիս:

Արճ կըսը. — Իս կուզիմ քու կնիկ:

Աղվիս կըսը. — Վըրե ան մեկ կնի՞կն ը, ան կնիկ չըկա՞ ախշըրքի վերա: Տիւ իմ քըսմնթ կտրող չիս, ձի քընի՛մ կա, քանճ իմ կնիկ շատ խարոտ ը, էրի՛, էրթանքը, տամ քըլ խանար:

Արճն էլ ուրնխութեն շաշ կիլնը, կըսը. — Աղվի՛ս ախպեր, անան մինքը ի՞նչըխ տանտակ տ՛երթանքը, խընանութին անինքը:

Կըսը. — Ա՛րճ ախպեր, գըլննա՛ տըմակըմ պի, գանտն թըխինքը, անգանգանտն բըլնավինքը, օր տն միր նամուս չըկուտըր:

Արճն էլ էլնավ, գըլննաց տըմակ մ՛առից, իրը:

Աղվիս էսաց. — Տանտի չուր հեվարին, իս կը խնլիմ, կանիմ գանտն, տիւ արը, իս կը կապիմ քյաֆիկ, կառնինքը, կերթանքը:

Արճ գըլննաց ուր տուն, աղվիս ըգտըմակ կերավ:

Մընաց, հեվարին առճ իրը:

Էսաց. — Աղվի՛ս, գանտն թըխի՞ր իս:

Էսաց. — Ա՛րճ, Աստված քու տուն ավիրը, քու տըմակ անցկում էր, խնլնավ, կըպավ տապկուցը կուղ: Մեկ տըմակով ի՞նչըխ խարսնիս կիլնը: Գըլննա՛, տըմակ մ՛էլ պի, օր ոչըմ կըտըր, մն քիչ էր:

Ան տըմակն էլ կիրավ աղվիս:

Յեվարին արճ իրը:

Եսաց. — Աղվիս, դիրիս գանտեն թըխվի՞ր ը:

Եսաց. — Աստված քու տունն անը, թհնիր խով էր, հըմեն էլավ կուտ, գըննաց մա թհրվան:

Եսաց. — Ապա, աղվիս, ի՞նչըխ տ'իլնը:

Եսաց. — Պեթկ ը տու հանաճ էրթաս, փետ պիրիս:

Արճ գըննաց, չուր ծառըմ մըզղանխառ քանչից, իտի վար թիվին, իպը:

Եսաց. — Աղվիս, փետ պիրը:

Եսաց. — Դե, էրկու խատ էլ տըմակ պի՛, ան գըննաց:

Արճ էրկու տըմակ էլ իպը:

Եսաց. — Ալիւր էլ պի՛, անալիւր գանտան չըն թըխը:

Արճ էլանվ, գըննաց ճանդանց անը: Կը տեսնա՝ մարթ չըկա ճանդանց: Կիրիշը, կը խը՝ օղուն վե լիկ աղուն ը, ալիւր չըկա: Ի՞նչըխ արավ, չըկանրցավ ճանդանց կանանցըցեր: Էլանվ, իրը հիտիվ աղվըսկուն:

Եսաց. — Աղվիս, Աստոն սիրուն, ճանդանցպանութին քյենե չի՞ գա, ալիւր աղանք: Չենե պան չի գա:

Աղվիս Եսաց. — Յեռոո՞, չըխ իմ խոր սանանթն ը:

Էն, արճ իկին ճանդանց:

Եսաց. — Արճ, տու իլի՛, նստի վար քարին, հանա ալիւր բանրանվը:

Աղվիսն էլ ըզճանդը ճըրխատ քյեչից, տիրըմ ճանդանց վար արճուկն կան իրը:

— Աղվիս ախպեր, քու Աստոն բանխտ, աղվիս ախպեր, քու Աստոն բախտ, խասը՛, ըզճը անգատը՛:

Արուն, արընճուր արճու գըլխեն կը չըռա տակ:

Աղվիս կըսը. — Հանա խարսնիս սըհա՞թ ը: Վուր տան տու չըս կանա ճանդանցըմ պանցըցը, տու ի՞նչըխ կնիկ տը շախիս:

— Աղվիս, Աստոն սիրուն, ըզճը անգատը՛, ծի թհրա:

Աղվիսն էլ կըսը. — Քանի իս, տու հանվանվա ինք, իս ըզքյի տ'անգատիմ, տու խիղճ իս, միխք իս:

Կըսը. — Աղվիս ախպեր, իմ գըլխիս վար ծը չըտանտը, իմ գըլխու քանվ ի՞նչ տ'իլնը:

Կըսը. – Բյենե վուր տա կը գա՛, էրկու տըմակ պիրիս, ծեծիմ, առնիմ վա՛ր քու գըլխուն:

Ան էլ կերթա, էրկու տըմակ կամը, կը գա՛: Ըզտըմակտիր կուտը աղվիս: Ոխչրի գյում կը կուռծը արծու գըլխի հինը:

Կըսը. – Իլը՛, գընա՛ քու տուն, չուր քու գըլխի ժըրը, նո՛ւր արը:

Արծ կերթա, քանի մ'եօր կը մընա ուր տուն: Խարիտ գըլխի կը ժըրը, կիւնը, կը գա՛:

Կը գա՛, կըսը. – Աղվի՛ս ախպեր, դիր իս գանք խարսնիս, քու քյենին պի ծիկ:

Կըսը. – Աստված քու տուն ավըրը, իմ անիր անկանդար մաս-րա՛ֆ արավ, քանսուն կըտիր ոխչար զհնից, մինք կերանք: Ան-կանդար անաղ խըմանք, մընացինք քու հիվով, տու չիկիր ըզքու կնիկ տաներ, տու ըզմի խանպիցիր:

– Աղվի՛ս, անպա՛ ի՞նչըխ անիմ:

Էսաց. – Պի՛, թանա՛ մասրա՛ֆ արա՛, քու խիլք վուր տա, քու խիլք գա՛ քու գըլխիս: Գընա՛, պի՛ քանսուն տըմակ, պի՛ քանսուն տիկ գյինը, նուր անինք խարսնիս:

Արծ էլանվ, գընաց, տըմակտիր իպը: Գյինիք էլ իպը: Աղվիս, ուր կնիկ, ուր ճըժիր կուտին, քյե՛ֆ կանին, արծ հանդե անուրը կը խատը:

Էլանվ, տանտակ դարո մ'իտու ուր անիրոչ ձեռ, էսաց. – Տու՛ գա՛ր, մինք խաղանք, խարսնիս ը:

Յեվարին արծ իրը տընեն:

Էսաց. – Աղվի՛ս ախպեր, դիրիս քու թանարիք տիսի, էրթանք աներանց տուն ախչիկ ուզելու:

Աղվիս էսաց. – Աստված քու տուն անիրը, գի գյեղական սագ, անդարեն կը զարկին, կը խաղան, խարսնիս ը:

Էսաց. – Խարսնիս ը, անպա՛ մինք ի՞նչըխ անինք:

Էսաց. – Խարսնիս ը, քը խանար ը, խանկին ի՞նչ: Գի կը զարկին, անունց խանար կը խաղան:

Արծ ուրանուրեն շաշ էլանվ:

Էսաց. – Աղվի՛ս, դե լանգի՛, յանք դիրիս:

Էսաց. – Դե՛, արը՛, նա ջըվան շըլկը՛:

Ջըվանըմ լիկ փըթիր արավ, իտու արծու քանակ:

Էսաց. – Աղվի՛ս, նա ի՞նչ ը մանջ ջըվըլին անցկընեն ծանդըր:

Էսաց. – Վըրե՞, տաւ չը՞ս գըտը, գանտն յը, քաւ պերած տը-  
մակտիրն ը, արիր իմ գանտն:

Արճ անութը, գանխ ը՛ խատնը:

Էսաց. – Աղվի՛ս ախպեր, իս քաւ Աստօնու բանխտ, տաւ գանտե՛մ  
խան, իս ուտիմ:

Էսաց. – Աստված քաւ խիմ քանկը, ինչ իս փըսակվա, քան-  
սուն էօր ուրախութեն պան չըմտավ զիմ պերան: Է՞, գանտեք  
զըմեն խանբըրուկ ը, անեն ոըքան էրկու գանտն յը, օր մեկ տուն  
ռաստ իրը, մեկ քաւխտ տը տանքյ անու: Օր տա մեկ գանտն  
պակաս իլնը, ըզմի տը սպանին գեղական:

Կիլնիմ, կերթան խարսնըսը տուն: Աղվիս ուր կնիկ կը խանը  
խաղ, ինչ արճաւ աչկ կ'ի՛նը աղվըսկու կնիկ, խիլք գըլխեն կիյա,  
անցկում խարոտ ը:

Կըսը. – Ա՛խ, աղվի՛ս, երանիկ էլներ, իմ կնիկն էլ քաւմու պես  
խարիտ էլներ:

Կըսը. – Եան ճաճ քաւրն ը, պըստիկ տը խասնը քյի, քանճ նա  
չատ խարոտ ը:

Ուր կընկան կըսը. – Տաւ տեղին խանվըքերով իս, վան  
կարմիր խանվըքիր խագը՛, արը՛, խաղա՛:

Էլըմ էլ զուր կնիկ կը խանը խաղ աղվիս:

Արճ կըսը. – Աղվի՛ս ախպեր, նա վի՞ր կնիկն ը՛ կը խաղա:

Կըսը. – Ան քաւ կնիկն ը՛ կը խաղա, իմ տեղին  
խանվըքիրով էր, նա կարմիր ը:

Ուրախութեն ծուխ արճաւ գըլխուց կերթա:

Կըսը. – Աղվի՛ս, անպան հի՞փ տ'երթանք փըսակ:

Աղվիս կըսը. – Մախվ, իս էրթամ, էրեց կընդընիմ, քավոր  
կընդընիմ, օր տան յանք փըսակ:

Աղվիս զուր անիր կը կանչը, կըսը. – Իլը՛, Աստված քաւ տուն  
անվըր, քանը շուն կա, տար բանիրանվը նա տուն, չուր մինք գանքյ:

Ճըժերուն էլ կըսը. – Հանեն մեկ քանըմ պըմնեցե՛ք ձեռ, ինչ  
արճ կը գան ժանու տաւռ, գյիսկ է լանվան<sup>18</sup> ուզեցեքյ մատեն:

Աղվիս կըսը. – Ա՛րճ ախպեր, դիրիս էրթանք փըսակ:

Աղվիս գարճ կը մըտուցը տուն վե: Օր կը գան, ուր շուն կը  
պիրը խանտ ուր, ճըժիրն էլ քանիր կը պըմնին ձեռ:

Աղվիս աչկով կանը ճըժերուն, կըսը. – Դե՛, գանկեցե՛քյ:

<sup>18</sup> Երեխաները հարսնածի առաջը կտրում են և փող ստանում (Ճ. Բ.):

Մեմեկ քարըմ կը գանրկին, շընիր կը խասնին դանխ արծ:

Արծ կը բռռա. — Աստծո՛ւ սիրուն, աղվի՛ս ախպեր, ըզծը ազատը՛:

Աղվիս կերթա ուր տուն, կը պանխկըվը: Արծն էլ շընիրու ձեռնեն կը պըռծընը, կը փախը: Կերթա ուր տուն, ալ խիլըյ գըլըխիս չըտանտը, անցկում շընիր պըռնած:

Կըսը. — Աստված իմ տուն ավըր, իս կելնիմ, աղվըսկուն կը խասպվիմ: Տիւ տանտը, հալա չէ՞ իմ աչկ մեկ էլ տ'իմը աղվիս:

Արծ կը գա, վանր աղվըսկե պուենին կը տանտը:

Կըսը. — Աղվի՛ս, անդ իլնը, դիրիս տիւ ըզբու խուգյին տընիս անծակ տըտում, իմ ձեռնից ս'անգանվի, իս ըզբյի տ'ուտիմ:

Աղվիսն էլ կըսը. — Աստված քու տուն ավըր, մեղավուր իս չէր, մեղավուր տիւ յեր:

Կըսը. — Ապա իս ի՞նչըխ աներ:

Կըսը. — Իս քյի շոտով թանբը արը, ըսըցը՝ գյինի խըմը, օր քու շուն քյի չըմիթխըսնա:

Արծն էլ կըսը. — Դե՛, էրթանըյ խարսնիս, խալա՛մ անա տըրուս իս գյինի տը խըմիմ:

Արծ կիլնը, կը գա խարսնըսը տուն: Աղվիս գյինի կը տա, արծ կը խըմը:

Արծ տիր'մ կը ծըռը, կինը մաչ գյեղին:

Աղվիս կըսը. — Ա՛րծ ախպեր, չէ՞ իս ըսըցը՝ քու հիտ-հանանձ գըլտըցը: Մարթ ուր աներանց գյեղ ընցկընա բեփարդութին կանի՞, ինչ տիւ կանիս:

— Աղվի՛ս, Աստծո՛ւ սիրուն, իս ի՞նչըխ անիմ, անա իմ խիլըյ վանր ձի չըտանտը:

Կըսի. — Իլի՛ վանր կանընըջին, ըզբյի թալ գյետ, բալըյի պաղիս, ռըհաթիս:

Կիլնը վանր կանընըջին, զինըյ ճըլխթը՝ կը թալը գյետ:

Ամբըրի շընիր կանանխին, կը խասնին, գարծ կը պըռնին, արծն էլ թացվիր, չըկանա փախը:

— Աղվի՛ս ախպեր, Աստծո՛ւ սիրուն, ըզծը անգանտը՛, — կը կանչը:

Ան էլ կըսը. — Ա՛րծ ախպեր, վիվ ծուկ պըռնը, ոռ կը թացվը:

Առձ բե անալ կանին, արծ կինի հանդե:

Աղվիս կը գա, ուր ձեռ կը տա արծու գըլըխիս, հիրար կը տա:

Կըսը. — Թանժա՛ փեսա, իլի՛ վե, ի՞նչ իս կուղ իլի հանդե:

Ինչ թանձր փեսը բնու կանը, արճ ա՛խ կանը, ինչ ախ կանը, աղվիս հախու կը փախը, կըսը. – Վուա՛, նա արճ էլմել տը ժըրը, գա՛ թախ ծը:

Կիլնը, կը գա՛ տուը, կըսը. – Կնի՛կ, արը, յանքյ, թանձր փեսեն ուտիմքյ դիրիս:

Աղվիս, ուր կնիկ, ուր տըղեկնիր կը գան թախ արճ, վուա՛ զարճ հանդե կուտիմ: Կը խաղան, կը գան ուրինց տուը, կը խասնին ուրինց մըրագ: